ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 62

«18» 07 2018 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 46, 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N 75, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 95 ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 86 ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռաֆֆի Վորոնցովի Ասլանյանին Երևան քաղաքի դատախազի պաշտոնից ազատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետի պաշտոնում նշանակելու ու Գևորգ Սուրենի Բաղդասարյանին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետի պաշտոնից ազատելու և Երևան քաղաքի դատախազի պաշտոնում նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի համապատասխանաբար՝ 11.07.2018թ. N 187-Ա և N 188-Ա հրամանները, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի «Ա.Դանիելյանին, Ա.Դավթյանին և Հ.Մարտիրոսյանին արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի անդամ նշանակելու մասին» 2013 թվականի սեպտեմբերի 25-ի N 46, «Ռաֆֆի Ասլանյանին արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի կազմում վերանշանակելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2013 թվականի սեպտեմբերի 25-ի N 46 հրամանում փոփոխություն կատարելու մասին» 2016 թվականի հոկտեմբերի 6-ի N 75, «Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի անդամներ Էմիլ Բաբայանի և Արթուր Դավթյանի անդամությունները դադարեցնելու, Արմեն Հարությունյանին և Գևորգ Բաղդասարյանին արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի անդամ նշանակելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2013 թվականի սեպտեմբերի 25-ի N 46 հրամանում փոփոխություններ կատարելու մասին» 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N 95

և «Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի անդամին վերանշանակելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N 95 հրամանում փոփոխություններ կատարելու մասին» 2017 թվականի սեպտեմբերի 25-ի N 86 հրամաններում «Ռաֆֆի Վորոնցովի Ասլանյանին - Երևան քաղաքի դատախազ» բառերը փոխարինել «Ռաֆֆի Վորոնցովի Ասլանյանին - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ» բառերով, իսկ «Գևորգ Սուրենի Բաղդասարյանին - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ» բառերը փոխարինել «Գևորգ Սուրենի Բաղդասարյանին - Երևան քաղաքի դատախազ» բառերով:

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

3. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին և Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ